

ՄԵՐ ԶԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

Աստուած ներող Չայր է եւ արդար Դատաւոր

Շատեր կը հաւատան, որ Աստուած սիրող ու ներող ըլլալով՝ պիտի ներէ մեր մեղքերը: Ասիկա մեղքերու փառութիւն ստանալու սխալ ըմբռնում մըն է, որ ընդհանրապէս կը գտնենք անոնց մօտ, որոնք կ'ուզեն փրկուիլ իրենց մեղքերէն առանց ընդառաջելու Քրիստոսի արեան յանձնուելու հրաւերին: Աստուած Հայր է: Այո՛, բայց արդար ու արդարութիւն պահանջող Հայր է: Իր արդարութիւնը իրագործուեցաւ իր Որդիին մահովը իսաչին վրայ: Ուստի, ան մեզ կրնայ արդարացնել «Քրիստոս Յիսուսի փրկագործութեան միջոցաւ» միայն (Հո. 3.24): Աստուած իր ներողամտութեան վստահողներուն չէ, որ ներում կը շնորհէ, այլ՝ իր Որդիին փառաբար արեան վստահողներուն:

ՄԵԿ ՏԱՐՈՒԱՆ ԸՆԹԱՑՔԻՆ ԿԱՐԴԱՆՔ ԱՄՔՈՂՋ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԸ

ՓԵՏՐՈՒԱՐ 2020

9	Շնկոց 23,24	Մատթեոս 7
10	Շնկոց 25,26	Մատթեոս 8:1-17
11	Շնկոց 27,28	Մատթեոս 8:18-34
12	Շնկոց 29,30	Մատթեոս 9:1-17
13	Շնկոց 31,32	Մատթեոս 9:18-38
14	Շնկոց 33,34,35	Մատթեոս 10:1-23

ՀԱՍՅԷ.

ՃՐԱԳ ՇԱՔԱԹԱԹԵՐԹ - ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ - Bourj-Hammoud, P.O.Box 80810 -Tel/Fax:01-258300- [facebook-ի էջ jerak ճրագ քերթ](#)

ԱՂՕԹ

ՀԻՎԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐԷ ԲՈՒԺՈՒԵԼՈՒ ԱՂՕԹ

Քու ժողովուրդէդ փարատէ ցաւերը եւ բժշկէ՛ հիւանդութիւնները, ո՛վ Տէր, մեր Աստուածը, եւ կատարեալ առողջութիւն շնորհէ բոլորին քու ամենայաղթ իսաչիդ նշանովը, որով մարդոց տկարութիւնները քու վրադ առիր եւ դատապարտեցիր կեանքի ու փրկութեան թշնամին: Դո՛ւն ես մեր կեանքն ու փրկութիւնը, բարերա՛ր եւ բազումողորմ Աստուած: Միայն դո՛ւն կրնաս մեր մեղքերը ներել եւ ցաւերն ու հիւանդութիւնները վանել մեզմէ, որովհետեւ քեզի ծանօթ եմ մեր կարիքները: Ո՛վ բարիքներու պարգեւիչ իւրաքանչիւրին կարիքներուն համաձայն՝ քու առատ ողորմութիւնդ պարգեւէ արարածներուդ, որոնք միշտ կը փառաւորեն ու կ'օրհնաբանեն քեզ, ամենասո՛ւրբ Երրորդութիւն, այժմ եւ միշտ եւ յաւիտեանս յաւիտենից: Ամէն:

Սիրելի ընթերցող, ՃՐԱԳ քերթը ամէն Կիրակի կը բաժնուի մեր ժողովուրդին, եկեղեցիներու բանկային մօտ: Նաե՛ր Facebook-ի վրայ փնտռել «Jerak կամ ՃՐԱԳ», ապա սեղմել «Like»-ը, կարդալու կամ անդամագրուելու համար:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻԲԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍՔԻ ԽՍ ՌՅԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՍ ԵԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119-105)

ԺԳ. ՏԱՐԻ ԿԻՐԱԿԻ, 9 ՓԵՏՐՈՒԱՐ 2020 ԹԻԻ 6

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՇՈՒՆՆԵՐԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ Ետայի 63.7-19: Բ. Տմ. 3.1-12: ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՈՒ 6.22-38

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԽԵՏԱՐԱՆԸ ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԵՍԻ 6.22-38

Յաջորդ օր, ժողովուրդը՝ որ մնացած էր լիճին միւս կողմը տեսաւ, թէ հոն միայն մէկ նաւակ կար, որուն մէջ Յիսուսի աշակերտները մտան եւ առանձին գացին. իսկ Յիսուս աշակերտներուն հետ նաւակ չմտաւ: Յետոյ Տիբերիայէն ուրիշ նաւակներ ալ եկան հոն, ուր Յիսուս Աստուծոյ գոհութիւն տալով բազմացուցած էր հացը եւ տուած ժողովուրդին, որպէսզի ուտեն: Ժողովուրդը տեսնելով, թէ Յիսուս հոն չէր, ոչ ալ իր աշակերտները, նաւակները առին եւ Կափառնաւում եկան Յիսուսը փնտռելու համար: Երբ զինք գտան լիճին միւս կողմը, հարցուցին. «Վարդապետ, ե՞րբ եկար հոս»:

Յիսուս անոնց պատասխանեց. «Կ'ըսեմ ձեզի, վստահաբար դուք զիս կը փնտռէք ոչ թէ, որովհետեւ իրաշքներ տեսաք, այլ՝ որովհետեւ այդ հացէն կերաք եւ կշտացաք: Փոխանակ կորստական ուտելիքը փնտռելու, ջանացէ՛ք ապահովել այն կերակուրը, որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ: Այդ կերակուրը Մարդու Որդին պիտի տայ ձեզի, որովհետեւ Հայրն Աստուած իր հաւանութեան կնիքը դրաւ անոր վրայ»:

Անոնք հարցուցին. «Ի՞նչ ընենք, որ Աստուծոյ ուզածը կատարած ըլլանք»:
Յիսուս անոնց պատասխանեց. «Աստուծոյ ուզած գործը այն է, որ հաւատաք անոր, որ ինք որկեց»:

Անոնք ըսին. «Ի՞նչ հրաշք պիտի գործես, որպէսզի տեսնենք եւ քեզի հաւատանք: Ի՞նչ պիտի ընես: Մեր հայրերը մանանան կերան անապատին մէջ, ինչպէս գրուած է. «Անոնց երկինքէն հաց տուաւ ուտելու համար»:

Յիսուս անոնց ըսաւ. «Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզի, թէ ինչ որ Մովսէս ձեզի տուաւ երկինքէն իջած հացը չէր: Հայրս է, որ ձեզի կու տայ երկինքէն իջած ճշմարիտ հացը, որովհետեւ Աստուծոյ տուած հացը այն է, որ երկինքէն կ'իջնէ եւ կեանք կու տայ աշխարհին»:

Անոնք ըսին. «Տէ՛ր, միշտ տուր մեզի այդ հացը»:

Յիսուս ըսաւ անոնց. «Ես եմ կեանքի հացը: Ան, որ ինձի կու գայ՝ բնաւ պիտի չանօթեմայ եւ ան, որ ինձի կը հաւատայ՝ երբեք պիտի չծարաւնայ: Բայց հիմա ըսի ձեզի, տեսաք ալ զիս, եւ տակաւին չէք հաւատար: Բոլոր անոնք, որ Հայրը ինձի կու տայ՝ ինձի պիտի գան, եւ ես ինձի եկողը պիտի չմերժեմ. որովհետեւ ես երկինքէն իջայ՝ ոչ թէ իմ կամքս կատարելու, այլ՝ կամքը անոր՝ որ զիս որկեց»:

**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԵԻ ԳԻՐՔԸՆ
63.7-19**

Տիրոջ ողորմածութիւնը պիտի յիշեցնեն, Տիրոջ մեծագործութիւնները պիտի փառաբանեն այն բոլորին համար, որ Տէրը ըրաւ մեզի համար: Իսրայէլի տան դատաւորն ու բարեբարը ի՛նքն է, որ իր ողորմութեամբ եւ արդարադատութեամբ այս բաները ըրաւ մեզի:

Տէրը ըսաւ. «Աստուծո՛ւ ժողովուրդս են, որդիներս են, ամօթով պիտի չձգեն զիս» եւ զանոնք փրկեց իրենց բոլոր նեղութիւններէն: Ո՛չ թէ պատգամաւոր մը կամ հրեշտակ մը, այլ՝ Տէրը ի՛նքն փրկեց զանոնք: Որովհետեւ կը սիրէր զանոնք եւ կը խնայէր անոնց, ինք անձամբ փրկեց, ոտքի կանգնեց ու բարձրացուց զանոնք անցեալ բոլոր ժամանակներուն մէջ:

Բայց անոնք անհնազանդ գտնուեցան եւ իր սուրբ Հոգին տրտմեցուցին, ուստի Տէրը թշնամացաւ եւ ինք պատերազմեցաւ անոնց դէմ: Այն ատեն անոնք հին օրերը փնտոցեցին, ըսելով. «Ո՞ւր է Մովսէսը, Տիրոջ ծառան: Ո՞ւր է Տէրը, որ ծովէն հանեց իր հօտին հովիւր: Ո՞ւր է ան, որ իր սուրբ Հոգին դրաւ իր ժողովուրդին մէջ, ան՝ որ իր աջով առաջնորդեց Մովսէսը եւ իր անունը յաւերժացնելու համար իր փառաւոր գորութեամբ անոր առջեւ բացաւ ծովուն ջուրերը: Ապա իր ժողովուրդը բացուած անդունդէն անցուց այնպէս դիւրին, ինչպէս ձի մը կը քայլէ չոր գետնին վրայէն, կամ ինչպէս նախորդ կ'անցնի դաշտին մէջէն: Տիրոջ Հոգին իջած՝ կ'առաջնորդէր զանոնք»:



**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՍԱՍԿԸ
ՏԻՄՈԹԵՈՍԻՆ**

3.1-12

Սա եւս գիտցիր, թէ վերջին օրերուն դժուար ժամանակներ պիտի գան, որովհետեւ մարդիկ պիտի դառնան անձնասէր, դրամապաշտ, ամբարտաւան, հպարտ, հայեցողիչ, ծնողներուն անհնազանդ, ապերախտ, սրբութիւնները ոտնակոխող, տմարդի, անգութ, չարախօս, անհանդուրժող, դաժան, բարիին թշնամի, մատնիչ, անպատկառ, գոռոզ, եւ աւելի հեշտամէր սիրող՝ քան զԱստուած: Երեսուրկապէս անոնք աստուածապաշտ են, բայց խորքին մէջ չեն հաւատար աստուածապաշտութեան գորութեան: Զգուշացի՛ր անոնցմէ: Անոնց մէջ կան նաեւ այնպիսիներ, որոնք տունէ տուն կը մտնեն եւ իրենցմով կը հրապուրեն մեղքերով ծանրաբեռնուած եւ զանազան ցանկութիւններէ բռնուած թեթեւաբարոյ կիները, որոնք միշտ կ'ուզեն գիտնալ, բայց երբեք ճշմարիտ գիտութեան չեն հասնիր: Այնպէս ինչպէս Շանէս եւ Շամբրէս մոզբըր Մովսէսի հակառակեցան, միտքով ապականած եւ հաւատքով սնանկ այս մարդիկն ալ ճշմարտութեան կը հակառակին: Բայց իրենց յաջողութիւնը երկար չի տեսեր, որովհետեւ իրենց անմտութիւնը շուտով յայտնի պիտի ըլլայ բոլորին, ճիշդ ինչպէս այն երկուքիւնը եղաւ:

Բայց դուն կառչած մնա՛ իմ ուսուցումիս, կեանքի օրինակիս, յօժարութեանս, հաւատքիս, համբերատարութեանս, սիրոյս եւ յարատեւութեանս, որոնք ցուցաբերեցի՛ նոյնիսկ հալածանքներու եւ չարչարանքներու մէջ:

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉԷՆ

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

Ս. ՄԱՐԳԻՍ ԶՕՐԱՎԱՐ



Ս. Մարգիս Զօրավար Կապադովկիոյ Գամիթք գաւառէն էր: Քաջ եւ առաքինի զինուորական մը, որ գօրապետի աստիճանին հասաւ: Համարակութեամբ կը քարոզէր Աւետարանը եւ կը կործանէր բազմութիւնները:

Երբ Յուլիանոս կայսրը, որ քրիստոնէութիւնը ուրացած էր, գահ բարձրացաւ, Մարգիս իր Մարտիրոս որդիին հետ Հայաստան ապաստանեցաւ, Տիրան թագաւորի մօտ եւ ժամանակ մը հոն մնալէ ետք անցաւ Պարսկաստան, Պարսից Շապուհ թագաւորին մօտ՝ ծառայելով զինուորական ասպարէզին մէջ:

Մեծ եղաւ իր որդիին՝ Մարտիրոսին ազդեցութիւնը իր հսկողութեան ներքեւ գտնուող պարսիկ գօրքին վրայ. որոնց մէջէն քրիստոնէութեան դարձողներ եղան:

Այս պարագան հետզհետէ ուշագրաւ դառնալով, Մարգիս եւ իր գաւակը արքայական հրաւեր ստացան զոհ մատուցանելու արժունի մեհեանին մէջ: Սակայն Սուրբ Մարգիս նոյնիսկ քաջութիւնը ունեցաւ անարգելու կուռքերը: Առ ի հետեւանք իրենց յանդուգն կեցուածքին՝ գօրավարն ու իր որդին մահուան դատապարտուեցան: Իր պարսիկ զինուորներէն տասնչորս անձեր, որոնք մինչեւ վերջ հաւատարիմ մնացեր էին, առին Մարգիսի մարմինը եւ մահուր զգեստներով պատեցին:

Բայց թագաւորին հրամանով իրենք եւս գլխատուեցան ու իրենց նահատակութիւնը եւս կը յիշատակուի ամէն տարի Սուրբ Մարգիսի եւ անոր Մարտիրոս գաւակին յիշատակին հետ:

ՀԱՐՑՈՒՄ ՊԱՏԱՍԽԱՆ ԲԱԺԻՆ

**ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳԸ
ԻՆՉՊԷՄ ԿԸ ԿԱՏԱՐՈՒԻ ՀԱՅ
ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍԷՉ**

Հայ Եկեղեցւոյ մէջ ընդհանրապէս խոստովանութիւնը կը կատարուի հաւաքական: Ապաշխարութեան եւ խոստովանութեան եկողները ծունկի կուգան, իրենցմէ մէկը կը կարդայ «Մեղայ Ամենասուրբ Երրորդութեան» զոջումի աղօթքը, որուն մէջ յիշուած են կամայ եւ ակամայ գործուած բոլոր մեղքերը, իսկ քահանան մէջ ընդ մէջ կ'ըսէ. «Աստուած թողութիւն շնորհէ՛»: Զոջումի աղօթքէն վերջ, քահանան «Ողորմեցի Ձեզ մարդասէր Աստուած» աղօթքը արտասանելով, Աստուծոյ անունով մեղքէ կ'արձակէ խոստովանողները:

Հաւաքական խոստովանութենէն գատ, անհրաժեշտ պարագաներուն ապաշխարութեան եկողներ, կրնան առանձին ներկայանալ քահանային եւ խոստովանիլ իրենց մեղքերը եւ բարի խորհուրդներ ստանալ անկէ՝ մեղքի դէմ պայքարելու համար:

ՀՐԱԺԱՐՈՒՄ

Կը հրաժարինք Սատանայէն եւ անոր բոլոր տեսակի խաբէութիւններէն, անոր պատրանքներէն, խորհուրդներէն, ճամբաներէն, անոր չար կամքէն, անոր չար հրեշտակներէն, չար գործակիցներէն, անոր չար կեանքը կատարողներէն, եւ անոր ամբողջ չար գործերէն, ամբողջութեամբ կը հրաժարինք: